

ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ  
ՈՐՈՇՈՒՄ

16. ապրիլի 2019, № 12/7.1

7.1 ԸՆԹԱՑԻԿ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՂ ՀԱՅՑՈՐԴ/ ԱՍՊԻՐԱՆՏՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆՆԵՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՈՉ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԵՎ ՍՏՈՒԳԱՐՔՆԵՐԻՆ ՀԱՏԿԱՑՎԱԾ ԿՐԵԴԻՏՆԵՐԻ ՎԵՐԱԲԱՇԽՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՇՊՀ-ի գիտական խորհուրդը որոշում է.

1. Ուսումնահետազոտական աշխատանքների պլաններով նախատեսված օտար լեզվի որակավորման քննությանը և ինֆորմատիկայի որակավորման ստուգարքին հատկացված կրեդիտները, որոնք առ այսօր չեն կուտակվել, փոխանցել և գումարել մասնագիտական որակավորման քննությանը հատկացված կրեդիտներին:

Ազատել այդ կրեդիտների համար կրկնակի վճարում կատարելու պարտականություններից, իսկ մասնագիտական որակավորման քննության պլանավորման և չիրականացման դեպքում վճարումը կատարել կրկնակի՝ հանրագումարային կրեդիտների համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՇՊՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Ե. ՍԵՐՈԲՅԱՆ